

Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդում
„-----„ ----- 2016թ.
(արձանագրություն №)

Վավերացնում եմ
նեկտոր
Ա. Թարվերդյան
„-----„ ----- 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ
ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԿՏՈՐԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

1. Ընդհանուր դրույթներ

1. Լրացուցիչ մասնագիտությունների սեկտորը (այսուհետ՝ սեկտոր) Հայաստանի ազգային ազրարային համալսարանի (ՀԱԱՀ) միջհամալսարանական, լրացուցիչ, շարունակական կրթության, վերապատրաստման և մասնաճյուղերի ուսումնամեթոդական գործունեության համակարգման բաժնի կազմի մեջ մտնող ուսումնական ստորաբաժանումն է, որը կոչված է հնարավորություն ընձեռնել ՀԱԱՀ-ի ուսանողներին հիմնական մասնագիտությանը զուգահեռ համատեղված, հեռակա ուսուցմամբ վճարովի համակարգում ձեռք բերել երկրորդ մասնագիտություն:
2. Լրացուցիչ մասնագիտությունների ուսուցման նպատակներն են.
 - անձի կրթական պահանջների առավել լրիվ բավարարում,
 - բազմակողմանի զարգացում,
 - որակավորման բարձրացումը, որոնց իրականացումը թույլ կտա ՀԱԱՀ-ի շրջանավարտներին իրենց տեղը գտնելու նոր ձևավորվող աշխատանքի շուկայում:
3. Սեկտորը ստեղծվում և լուծարվում է ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:
4. Սեկտորի կառուցվածքը, գործունեության սկզբունքները, իրավասությունների շրջանակները կարգավորում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՀԱԱՀ-ի կանոնադրությունով և սույն կանոնակարգով:

2.Սեկտորի կառուցվածքը և կառավարումը

5. Սեկտորը ներառում է հետևյալ կառուցվածքային բաժանմունքները՝ ըստ մասնագիտական ուղղվածության.
 - ա). տնտեսագիտակառավարչական,
 - բ). ագրարային,
 - գ). ճարտարագիտական,
 - դ). տեխնոլոգիական:
6. Սեկտորը իրականացնում է ուսանողների ընդունելությունը հանրապետության պետական ԲՈՒՀ-երի (նաև հավատարմագրված ոչ պետական ԲՈՒՀ-երի) ուսանողների և շրջանավարտների, ինչպես նաև ՀԱԱՀ-ի պետ. քոլեջի և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական քոլեջների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների թվաքանակից:
7. Ուսումնառության տևողությունը կապված է հիմնական և լրացուցիչ մասնագիտությունների ուսումնական պլանների համապատասխանությունից և կարող է կազմել ոչ ավելի, քան 3 տարի:
8. Սեկտորը կարող է իրականացնել.
 - 8.1. Հեռակա համակարգում ուսումնական գործընթացի խմբակային և անհատական ուսուցմամբ համապատասխան ուսումնական ծրագրեր:
 - 8.2. Դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանություն և ավարտական քննությունների անցկացում:
 - 8.3. Ուսումնամեթոդական աշխատանքների և հրատարակման գործընթացը:
 - 8.4. Արտադրական կազմակերպությունների հայտերով նոր տեխնոլոգիաների համապատասխան կրթական ծրագրեր:
 - 8.5. Ֆինանսական պլանի և ուսուցման վարձաչափերի համակարգում:
9. Ուսումնառությունն ավարտած ուսանողներին շնորհվում է համալսարանական նմուշի վկայական:
10. Սեկտորը ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի որոշմամբ կարող է ունենալ մասնաճյուղեր:
11. ՀԱԱՀ-ի ռեկտորը լրացուցիչ միջոցների հաշվին աշխատողների դրույքաչափերի և աշխատավարձի նկատմամբ կարող է կիրառել տարբերակված հավելումներ, մասնագիտական վարպետության, որակյալ աշխատանքի և այլնի համար:

12. Սեկտորը ղեկավարվում է պետի կողմից, որին աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է ՀԱԱՀ-ի ռեկտորը:

13. Սեկտորի վարիչը.

13.1. Հաշվետու է բաժնի պետին, ուսումնամեթոդական կենտրոնի տնօրենին և ռեկտորին:

13.2. Իրականացնում է հսկողություն սեկտորի կառուցվածքում գտնվող կազմի հավաքագրման աշխատանքները:

13.3. Կազմում է ծախսերի նախահաշիվը, հաստիքացուցակը և ներկայացնում ռեկտորի հաստատմանը:

14. Լրացուցիչ մասնագիտությունների սեկտորի ուսումնամեթոդական աշխատանքները համակարգում է ուսումնամեթոդական կենտրոնի խորհուրդը: